

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՄԲ

ՄԻԱԲԱՆԻՑ ԴԳՐԵՎԱՆՈՒՑ ԱՐՄԱՇՈՒ

ՏԱՐԻ 45

ԹԻ 2

ՅՈՒՆԻՍ 1896

ՊՍԵՄԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹՅԱՆ

Տարեկան	40	դուրուշ
վեցամսեայ	20	»
թղթատարուած եան ծախք տարեկան	10	»

Հատով ՄԵԿ Դուրուշ

Կ. ՊՈԼԻՍ

Տպագր. ԱՐԵՎԵԼԻՔ Լրագրոյ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՎԱՆՈՒՅ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ	Մ. Ե. Օ.
ՎՆՈՍԱԶ	Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ
ՅՅԻՐ	ՍՄԲԱՏ Վ.
ԺԱՄՆԵՐԳՈՒԹԻՒՆ	ԶԱԻԷՆ Վ. Տ.
ԲՐԻՍՏՈՆԻՈՒԹՅԱՆ ԱԶԳՅՅՈՒԹԻՒՆԸ ՖԻԿՍՔԷԼ ՏԸ ԳՈՒԼԱՆԺ	
ՄՍՏԵՆԻԴԻՑԱԿԱՆ	Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ
ԴՍԻՈՂԻ ՆՈՒԹԵՐ	ՄՈՒՇԵՂ Վ. Ս.
ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԴՍՂԱՊԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ	

Բաժանորդագրուած եանց, ծանուցմանց եւ այլ մանրա-
մասնուած եանց համար դիմել առ

Տնօրէնուած իւրն ԱՐԵՅԻԾԱՔ Լրագրոյ

Ղալաքիա, Նորասունկեան — Խան

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՔ

Թէ՛ մայրաքաղաքիս եւ Թէ՛ գաւառաց համար բաժա-
նորդագինք կանխիկ կը վճարուին:

Բաժանորդագրուած իւրք կ'սկսին իւրաքանչիւր ամսոյ
1 ին կամ 15 ին:

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն


ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ և ԲԱՂԱՔԱԿԱՆ

ԽԵՆ. ՏԱՐԻ

7 ՇՈՒՆԻՍ 1896

ԹԻՒ 2

ԴՊՐԵՎԱՆՈՒՑ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐ



Մայիս 26 կիրակի առտուն, Արմաշու Չարխափան
Ս. Աստուածածնի Տաճարին մէջ, շքեղ եկեղեցական
հանդիսութեամբ, Ս. Պատարագի սկիզբը, զաւազանի
իշխանութիւն կամ վարդապետի աստիճան տրուեցաւ
Դպրեվանուց Եօթը անդրանիկ սաներուն, որք անցեալ
տարի յունիս 18 ին արեղայի ձեռնադրութիւն առած
էին: — Նորընծայ վարդապետներն են,

Տ. Բարգէն վարդապետ Կիւլէսէրեան, Այնթապցի,
Կիլիկիոյ վիճակէն.

Տ. Խոսրով վարդապետ Պէհրիկեան, Ջարացի, Սե-
բաստիոյ վիճակէն.

Տ. Ջաւէն վարդապետ Տէր Եղիայեան, Պաղտատ-
ցի, Նոյն վիճակէն.

Տ. Մուշեղ վարդապետ Սերովբեան, Արսլանպէկցի,
Նիկոմիդիոյ վիճակէն.

Տ. Սմբատ վարդապետ Սաստէթեան, Ատաբաղար-
ցի, Նիկոմիդիոյ վիճակէն.

Տ. Աղան վարդապետ Համամեան, Ապուլէսցի,
Ակնայ վիճակէն.

Տ. Մաշթոց վարդապետ Փափաղեան, Վանեցի,
Նոյն վիճակէն:

Դպրեվանուց հիմնական կանոնագիրը կը տրամադրէ,
որ իւր սաները վարդապետական աստիճանը ստանան,
եւրբ ուսումնական ընթացքին աւարտեն, և տարեկան
քննութիւններով իրենց զարգացումը վիպեն, և ի վերջ
ընթացից՝ քննութեան նպատակաւ՝ յատուկ երկարութեան
մը պատրաստեն, այն որ եւրոպական համալսարանաց
բառով Թէզ (thèse) կը կոչուի, (և մեր մէջ տարբեր ա-
նուններով կը թարգմանեն բառարանները, զորօրինակ՝
աւարտական, քննարկական ևլն.): Այդ աշխատութիւնը կը
կատարուի որոշ նիւթ մը ընտրելով, և ուսման ճիւղին
պահանջից համեմատ անոր վրայ իւր անձնական զննու-
թեամբ աշխատասիրութիւն մը յօրինելով:

Դպրեվանուց վարդապետներուն ընտրած նիւթերն
եղան.

Տ. Բարգէն վարդապետինը՝ Եղիշէ պատմաբան:

Տ. Խոսրով վարդապետինը՝ Գրիգոր Տաթեւացի:

Տ. Ջաւէն վարդապետինը՝ Յովհան Օճնեցի:

Տ. Մուշեղ վարդապետինը՝ Գրիգոր Նարեկացի:

Տ. Սմբատ վարդապետինը՝ Ներսէս Լամբրոնացի:

Տ. Աղան վարդապետինը՝ Գրիգոր Լուսաւորիչ:

Տ. Մաշթոց վարդապետինը՝ եկեղեցւոյ Շարականներ :

Իւրաքանչիւրը պարտաւոր էր իւր ընտրած նիւթին վրայ , թէ պատմական , թէ մատենագրական , և թէ վարդապետական քննութիւններ կատարել , և իւրաքանչիւրին անձին , և գործոց և կարծեաց վրայ հիմնական տեսութիւններ յայտնել , և կամ արդէն յայտնուած տեսութեանց արժէքը պարզել :

Սովորաբար եւրոպիոյ համալսարանաց ընթացաւարտներէն պատրաստուածը՝ հարիւր տարւորական էջերէ բաղկացեալ գործ մըն է , և նոյն չափը Դպրեվանոց ընթացաւարտներուն ալ պայմանադրուեցաւ , այլ ներկայեալ աշխատութիւնը կրկինէն անելի և դրեթէ եռապատիկն եղան :

Տարեկան քննութիւններուն արդիւնքն արդէն պահով էր , զի խնամակարութեան կողմանէ Դպրեվանոց տեսչական և ուսուցչական մարմնոյն տրուած հրահանգը՝ այս եղած է , որ այն աշակերտք որք վարդացման սպացոյց չեն ընծայեր , քննութիւններէ ետքը արձակուին , և այդ պայմանը գործադրուած է ամեն տուն : Վերոյիշեալ երկասիրութիւններն ալ տեսչական և ուսուցչական մարմնոյն գնահատման ենթարկուելով , ըստ ամենայնի արդարացուցին այն ակնկալութիւնը , զոր 1889—90 տարւոյ անդրանիկ սաները իրենց եօթնամեայ ուսումնական շրջանին մէջ ներշնչած էին :

Յիշենք այստեղ որ անցեալ տարի ալ ձեռնադրութեան առթիւ , Ամեն . Ս . Պատրիարք Հօր հրամանաւ , իւրաքանչիւրն մէկ մը եկեղեցական նիւթի վրայ՝ աշխարհաբար լեզուով , և մէկ ալ կրօնական նիւթի վրայ դրաբար լեզուով երկերկու ընդարձակ գրութիւններ ներկայած էին , որք դովելի դատուեցան և իրեւել արժանեաց փառս ծառայեցին :

Կուսակրօն եկեղեցականաց դատադանի իշխանութիւն ընդունելը , սովորաբար ձեռնադրութեան ամբողջացում

նկատուած և յատուկ նշանակութիւն չէ ունեցած : Այս անգամ տարբեր ձեւ մը առաւ Դպրեւանուց վարդապետներուն արուած աստիճանն և դաւաղանի իշխանութիւնը , համաձայն Կեդրոնական վարչութենէ վաւերացեալ կանոնադրոյն : Ասոնց արուածը պարզապէս արարողութիւն մը չէ , այլ և Դպրեւանուց ծրագրին համեմատ , ազդային — եկեղեցական գիտութեանց և դպրութեանց շրջանին համար ընթացաւարտի վկայական . (հիմնական կանոնագիր , ուսումնական մաս . յօդուած 9 .) :

Նոյն կանոնագիրը կը պահանջէ , որ ընթացաւարտ ունենին կամ նորընծայ վարդապետներն , վարչական կամ եկեղեցական կամ ուսումնական ճիւղերու մէջ պաշտօններու կոչուին ի վարժութիւն . (յօդուած 13) , և Դպրեւանքն առաջին անգամ ըլլալով կըցած է պատրաստ ընթացաւարտներ ունենալը յայտնել Կեդրոնական վարչութեան , և սա , ինչ ինչ մասնաւոր և լրագրական տեղեկութեանց նայելով , դործը նկատողութեան առած է , և կարեւոյն սահմանին մէջ որոշում մը կ'աւելակարգուի ի մօտոյ :

Կրօնական թերթին ալ այդ դործունէութեան մաս կը կազմէ , զի Դպրեւանուց ընթացաւարտ վարդապետները պիտի աշխատին մասնաւորապէս անոր խմբագրութեան :

Այս տեղ պէտք էր տեղեկութիւնները լրացներու համար յաւելուլ Դպրեւանուց ուսումնական ծրագիրը , բայց զայդ ուրիշ պատեհ առթի կը թողունք , պէտք եղած կերպով բացատրելու համար :

Մ. Ս. Օ.

Վ Ն Ա Ս Ը

Ոգին՝ որ կ'ներգործէ ժամանակիս վրայ՝ յառաջդիմական ամէն ոյժերով կ'մղէ զմեզ , ամէն կարեւոր և կենցաղօրու գիտելիքներ հետզհետէ կ'ընդհանրանան ու լայն տեղ մը կը զբաւեն , աւելորդ բեռ մը միայն կ'նկատուի այն միտքերուն համար՝ որ ընդունայն թարթափումներէ հաճոյք չեն զգար : Իրականին ու գործնականին հետապնդումը նշանաբան ունենալով՝ մեր բոլոր ուշը կեդրոնացուցած ենք մտաւոր զարգացումի վրայ :

Այո՛ , անշուշտ , լա՛ւ ուղղութիւնն է այս , և պէտք է պատկառ կենալ անոր : Բայց՝ թէ՛ միա՛կ այս տեսակէտը բաւական է մարդուն՝ իր բոլոր կարողութիւններն ազնուացնելու կամ պէտքերը գոհացնելու համար՝ այդ տարակուսական կ'մնայ մեզի : Նախ՝ հարկ չլայ մեծ սրատեսութիւն մ'ունենալ՝ խելամուտելու համար թէ՛ մեր առած մտաւոր կրթութիւնն ալ կարծուածէն շատ աւելի տկար ու սահմանափակ է տակաւին : Գիտական քանի մը չոր ծանօթութիւններ , քիչ մ'ալ դրական շօշուանք , ահա՛ ինչ որ կ'կազմէ կամ թէ՛ ըսենք՝ կ'զարդարէ մեր մաքին չինուածքը :

Իսկ ո՞րն է այն աւելորդը՝ զոր կ'ուզենք թօթափել մեր վրայէն ,— կրօնական ուսուցումը : Մենք մաքի ազնուականներ՝ կ'մոռնանք սրտին ազնուագոյն պահանջումները և կը թողունք որ անոնք պարտաւոր ելնեն մեր խղճի ատենէն : Վոյթ չէ՛ որ խամրի մեր ներքը անօտարմնալի ժառանգութիւն մը հողին վրայ բացուած ծաղիկը՝ որ կրնայ մեր ամբողջ կեանքը խնկել կամ անուշել մեր բոլոր դառնութիւնները : Ուղեղի յաւակնութիւններով ուռած՝ ամենէն առաջ մեր զրութիւնը կ'ընենք սպաննել կրօնքը , որպէս թէ՛ կարելի ըլլար՝ առանց անոր՝ սահմանել կամ ճանչել ամէն ժամանակներու և ամէն աշխարհներու :

մարդը : Այնուհետեւ մեղի համար ճամարութիւն մը կ'դառնայ սա մտածութիւնը՝ թէ կրօնական զգացումը անարդ տկարութիւն մ'է՝ տղայ մարդկութեան ծնունդ , որուն մատուցած ծառայութիւնը ո՛չ ոք աւելի կրնայ դնահատել քան քահանան՝ որ կ'շահագործէ զայն խո նկով , ու գանձանակով :

Մեր այսօրուան դատախարակութեան ազդած ներշնչումին հօգնէ է այդ՝ որ դպրոցական դրասեղաններու վրայէն սկսելով էլը վիճէ մեր ծակտին : Կոխակներ սակայն , այդ ասէլորդ կարծուածը մեր կեանքին , մեծագոյն պաշարն է դեռ , քրտածան մեղմէ՝ ո՛րչափ ալ ստուեր մը նկատենք զինքը , անոր պակասը ամենէն աւելի սքամադրուած ենք զգալով՝ երբ զուարթ է մեր հոգին ու առողերուն կ'նայինք՝ երբ տխուր է մեր բախտը ու մեր ներքը կ'յտաւինք : Կսիւք ընդհուպ երեւան կուգայ մեր խորհուրդներուն և զգացումներուն միջեւ . կ'փորձուինք ճիգեր ընել՝ առաջիններուն տալու համար յայթանասկի վերջին բառը , իսկ միւսներուն հետ այնպէս կ'ուզենք վարուիլ՝ որպէս թէ անոնց թախանձանքներն մեր գլխուն թաւն ըլլային : Անոնք սակայն չեն լուր ու չկարծուիր որ լուր երբեք , այդ յայտնի դժուարութեան առջեւ բռնի խոտովանութիւն մը կ'շարժէ մեր շրթունքն ընդունելու համար թէ կրօնքին զգացումը երկնային պատգամախօս մ'է մեր գիտակցութեանը մէջ . իսկ եթէ դժբախդաբար այդ լեզուն հասկնալու բարոյական ոյժը կորսնցնենք՝ այն առեւն մեր առջեւ տարածուած խռոր ու հոծ տարրի մը՝ ուսմիկին՝ աջբերուն վրայ կ'նկատենք այդ վարագոյրը , իբր թէ թանձր արգելք մ'ըլլար այն՝ տիեզերքի դադան իբր հետադօտող կամ մարդուն ճակատագիրը շատ մօտէն գիտող նայուածքներու : Ինչ որ է՝ մենք սակայն դո՛հ պիտի մնայինք ստուգիւ , եթէ գէթ ուսմիկներն կամ անդրադէտներն մեր մէջ կարենային օգտուիլ ու լուսաււորուիլ ինչպէս որ պէտք է՝ իրենց կրօնքէն ու անոր վարդապետութիւններէն , վասն զի անշուշտ որ մը՝ անոնք պիտի կարենային իրենց կեանքովը տալ մեզի բարոյականին ամենէն արդ ու հասարակ դասերը , կարծեցեալ գիտութեան նախադասները պիտի ըլլար այդ օրը : Պատմութենէ օտար երեւոյթ մը չ'է այս . չ'է մի որ հին աշխարհը ձկնորսներէ առաւ իր բարոյականը :

Տխուր իրականութիւն մ'է այսօր՝ թէ մեր մանուկներուն և մեր ժողովուրդին համար հաւասարապէս արժէք մը չունի մեր տուած կրօնական կրթութիւնը։ Առաջիններն ուրիշ պատճառներով կ'ընդունեն , ու չեն ուզեր հին գիծերու վրայ համեստ քայլեր առնուլ , միւսներն ալ սովորականին ու աւանդականին վրայ խարխալ նետած՝ ո՛չ առաքաստ կ'ընեն և ո՛չ իրենց առջեւ բացուած հորիզոններուն կ'նային։ Այս վիճակին վրայ ամենէն աւելի մտահոգ ըլլալով՝ որո՞ւ պարտքն է դարման մը խորհիլ . — անշուշտ կղերին , քրիստոնէական կրօնի կամ հայ եկեղեցւոյն պաշտօնէին , խղճին ու Աստուծոյն առջեւ պատասխանատու նկատող այն անձին՝ որ Աւետարան կ'ընթողէ։ Զարմանալի է սակայն որ այս երեւոյթներուն հանդէպ նա անհարթէր մնալով՝ միշտ կ'փրկէ իր օձիքը՝ թողլով որ իրեն հսկողութեան յանձնուած տաճարին մէջ իւրաքանչեւ կ'ինքնուրոյն երկրպագութիւնը խառնուի Պիղատոսի զինուորներուն ծաղրական ծնրադրութեանց հետ։ Իսկ եթէ նոյն այդ կղերը՝ իր պաշտօնին բեր 'ամբ' ո՛չ միայն ժողովուրդին կամ ռամկին , այլ և ուսեալներու համար ուղէ ընտանի ընել Աւետարանին հաւատքը՝ առանց խարքալելու այն սիրտերը՝ որ դեռ չեն յաւրացած բոլորովին , կամ իր խօսքն ու քարոզութիւնը քիչ ու շատ յարմար գործէ բանդէտ մխոքբութեւ , ինչպէս երբեմն կ'ընէր Պօղոս , վտանգ կայ որ հակասութեանց մէջ գլորի։ Թոյլ չ'տրուիր որ «երկնից արքայութեան աշակերտող դպիրը հինն ու նորը միասնամայն հանէ իր դանձէն»։ (Մատթ. ԺԳ. 52)։

Ասանկ բարձրագոյն ուսումի մը համար դեռ անպատրաստ ենք բոլորովին , և այդ պատճառաւ է որ գիտական ա՛յս կամ այն տեսութեան՝ զրական ա՛յս կամ այն ընթերցումէ թեւադրուած՝ հեգնական «մտք բարով» մը կ'ըսենք կրօնքին , դեռ անոր սեմերուն վրայ մեր ոտքը չ'դրած։ Թեթեւ բարքի և թեթեւ կրթութեան մը յայտնի նշանն է այս։

Ուշ դնենք պահ մը՝ եթէ կ'ուզենք՝ մանուկներու տըրուած կրօնական կրթութեան . տուներու մէջ կ'պակսի այն , պէտք է անյնիլ դպրոցներուն՝ ուր իբր թէ պաշտօնական նշանակութիւն մը գտած է այն այսօր , ու պիտի տեսնենք թէ այդ ուսման ծրագիրը մէկ երկու քրիստոնէականներու ետեւառածութեանը վրայ կ'դառնայ միայն։ Այս քրիստոնէականներն

ալ յօրինուածի մեծ տարբերութիւն մը չունին իրարմէ . միշտ միեւնոյն բանն է որ կ'իրկնուի հարց-պատասխաններով : Թե-
րեւս այդչափին բաւական համարուէր , եթէ գործնական բա-
րոյականի մը և կրօնական համոզումի հղօր տպաւորութիւն-
ներն ու քաղցրիկ շունչը գէթ այդ ամբողջը կենդանի հա-
ւատքով մը շարժման մէջ դնէին : Սակայն ոչ . բոլոր այն ու-
սումներու քով՝ որոնք մասնաւոր մտադրութեամբ կ'աւան-
դուին՝ այս ուսումը երկրորդ կամ երրորդ կարգի մը վրայ
դրուած՝ իր պատեանը չփոխեր բնաւ , և դեռ տղան շատ
պզտիկ՝ կ'սպառէ անոր նիւթը : Յետո՞յ — ա'լ բան մը չխօս-
ուիր իրեն . իսկ եթէ հարկ ըլլայ՝ նոր նախանձայութեամբ
մը՝ շարունակել տալ զայն , ձանձրոյթը կեցած է սրտի առա-
գաստները սեղմելու համար . դործիքին ու դարձաւորին ան-
բաւականութիւնը ինքնին դուշակել կուտայ հետեւեալքը :

Այս վիճակին մէջ թող Վ մանուկ կամ պատանի հայ ու-
սանողները՝ մէկ ուստումով կ'անցնինք ռամիկին . իբր թէ մեր
դործն ըլլար ո՛չ ամեն հոգիներու հետ խօսիլ՝ այլ միայն եկե-
ղեցւոյ մէջ հանդիսաւոր օրերու բազմութեան քանակութիւնը
ապահովել . ինչ ողորմելի արարածներ ենք մենք որ չենք կըր-
նար կենսատու բան մը քաղել հանել Աւետարանի յաւիտե-
նական էջերէն՝ ամէն հասակի և ամէն միտքերու համար :

Ժողովուրդի կրօնական վիճակն ալ թողած ենք բախտին :
Դեռ շատ հեռու է մեզմէ այն օրը՝ յորում Եփրայեց-այ Լո-զի
հեղինակին հետ կարենանք ըսել . «Թողեալ զբան սկզբանն
Քրիստոսի՝ ի կապարոսն էկէսցոս» : Տակաւին՝ ինչպէս կ'դան-
դատի Առաքեալը՝ քրիստոնէական կրօնքի աշխարհէն անդին
անցած չունինք , ու կատարեալ հասակին համար սահման-
ուած հաստատուն կերակուրը ո՛չ ոք կ'ճաշակէ մեր մէջ : Նոյն
խակ շատ անգամ անանկ համոզումներու վրայ շինուած կը
տեսնենք մեր ժողովուրդի մեծ մասին կրօնական դադախարք՝
որ ո՛չ աւետարանական են իսկապէս և ո՛չ ալ կենսական ,
այնպիսիներու հաւատքը աղքատ Ղազարոսին իրական անձնա-
ւորութիւն մ'ըլլալէն կամ չ'ըլլալէն՝ կախում կրնայ ունե-
նալ (*) . անոնց մտքին համար մարդեղութեան խորհուրդն ու
Սամարացիին առակը միեւնոյն մութ կնճիռն ունին :

(*) Բարեպաշտ կին մը կորսնցուցած է իր հաւատքը՝ լսելով կրօ-
նաւորէ մը Թէ Աւետարանին «աղբատ Ղազարոս»ը առակաւոր կամ
ստեղծական դէմք մ'է եւ ո՛չ Թէ իրապէս ապրած մարդ մը :

Բարձրացնենք ժողովուրդին կրօնական կրթութիւնը . Մանուկներու դաստիարակութեան ամուր խարխալն ընենք զայն , ուսեալներու հանդերձն ալ պատրաստենք այդ երկնահրաւէր կոչուներին համար :

Մեր խորին համոզումն է՝ թէ առանց Աւետարանի բարձր ու լուսաւոր քարոզութեան՝ մեր բարոյական կեանքը օր մը պիտի քայքայուի . չխաբուինք արտաքինայարդար երեւոյթներէ :

Ե. Վ. ԴՈՒՐԵԱՆ

Յ Ո Ւ Ր

Երկրաւոր կենաց սովորական պարագայի մը զերազանց փալարն կ'ներկայէ մեզ Աստուածաշունչի զիրքերէն մին , որ Յօրայ կեանքն կ'պատմէ , և հրէական բարձրագոյն մտքի բարոյական գիտակցութեան և կրօնական խմտոտակութեան սկզբունքներն կ'ընծայէ մեզ : Բաց աստի այդ գրքին հեղինակն կ'ուզէ բացատրել թէ ինչպէս և ինչո՞ւ համար արդարոյն թշուառութիւն սահմանուած է երկրի վրայ , և այն գաղափարներն՝ զորս կ'ընծայէ նա իւր ընթերցողաց՝ նոցա մտքին վրայ կարի խայթիչ և ուշադրաւ տպաւորութիւն մը կ'իթ ուղեն :

Ահաւասիկ այդ գրքին բովանդակութիւնը . — Քանանու տահմաններէն բաւական հեռու և Եդոմայ ընդարձակ դաշտերուն մէջ տարածուող Աւսիգ կամ Հուս երկիրը կ'ընակէր Յօր անուն աւաքինի և աստուածապաշտ մարդ մը որ իւր ցեղին ամենէն աւելի հարուստն և անհամար խաչանց ու բաղմամբիւ ընտանեաց տէր եղած էր : Սատանան որ կ'ջանար չարախօսել մարդոց վրայ Աստուծոյ առջեւ , երբ կ'հարցուի իրեն թէ ինչպէս կ'դառնէր զբարեպաշտն Յօր , կ'պատասխանէ թէ

նորա գովեստն ընելէ առաջ պէտք է զայն փորձել միանգամ ընդ միշտ , վասն զի նորա այնքան աստուածապաշտութիւնն ու երկիւղածութիւնն իւր հարստութեանց արդիւնքն են և ոչ թէ իւր անկեղծ սրտին , թո՛ղ առնուի նորա ձեռքէն իւր ունեցածն , և ահա նորա աստուածապաշտութիւնն ալ ամբարշտութեան կ'փոխուի : Բանասարկու հրեշտակին սոյն խօսքերուն վրայ Աստուած կ'թոյլատրէ նմա զրկել զՅոր իւր բոլոր ունեցածէն , և մէկ օրուան մէջ Յոր կ'կորսնցնէ իւր տունն և զաւակներն , իւր ոչխարներն և գերիներն և ամենայն ինչ , և թէպէտ այդ վայրկեանէն նա թշուառութեան մատնուած էր այլ եւս , սակայն ողբալով կ'համակերպէր իւր բազդին և կ'ըսէր , «Տէր ետ և Տէր առ , որպէս Տեառն հաճոյ թուեցաւ , նոյնպէս և եղև , եղիցի անուն Տեառն օրհնեալ» (Յոր . Ա . 22) : — Այս բաւական չէր չարախօս հրեշտակին համար , վասնզի ցորչափ Յոր տէր էր իւր առողջութեան , տակաւին նա կարող էր երջանիկ ըլլալ , որով և գոհութիւն մատուցանել Աստուծոյ : Ուստի նորա հաւատարմութիւնն կատարելապէս փորձելու համար հարկ էր նաեւ սոսկալի հիւանդութեան մը մատնել զնա :

Ընդ այս եւս կ'հաւանի Աստուած , և կը թոյլատրէ բանասարկուին այդ վերջին փորձն ալ ի գործ դնել ի նմա , պատուիրելով պահել «միայն զոգի նորա» և ահա Յոր դառնապէս կ'հիւանդանայ «չարաչար կեղով յոտից մինչեւ ցլուրէ» , այնպէս որ ամէն ոք կ'հեռանայ իրմէն , և նոյն իսկ իւր կիներն յուսահատելով իւր այդ վիճակէն և իւր ամուսնոյն վրայ հասած փորձանքներն նորա առջև դնելով խորհուրդ կուտայ նմա տրտնջալ ընդդէմ Աստուծոյ «աղէ՛ ասա՛ բան ինչ 'ի Տէր» . բայց տակաւին Արդարն Յոր չ'կորսնցներ բնաւ իւր հոգեկան կացութիւնն հանդէպ Աստուծոյ , և հաստատուն հաւատարմութեամբ մը կ'պատասխանէ իւր կնոջ . «եթէ զբարիսն ընկալաք ի ձեռանէ Տեառն , չարեաց , ո՞չ համբերեցեմք» . Այս կ'լինի Յորայ համբերութեան և առ Աստուած ունեցած հաւատարմութեան բովանդակ հիմք , զոր չ'են կրցած խախտել ոչ իւր կնոջ խորհուրդներն , և ոչ իւր երեք բարեկամաց մեղադրանքն , և որով Յոր կ'արժանանայ աստուածային վարձատրութեան , իւր նախընթացաբար բոլոր ունեցածին կրկինն ստանալով :

Ահա այսպէս Յոբայ Գիրքէն կ'ուսանինք թէ ի՞նչպէս նա-
խախնամական արդարութիւնն մարդուս անծանօթ պատճառ-
ներով տեղի կուտայ երբեմն վշտերու , միշտ վարձատրու-
թիւն մը պահելով նմա : Երկրաւոր այդ վշտերուն մէջ
ինչ որ կ'պահանջուի հաւատացեալէն , այն է զի նա պար-
տաւոր է հաստատուն պահել իւր հաւատքն ու հաւա-
տարմութիւն , և ահա յայնժամ Աստուած չ'պիտի մոռնայ
զայն , և իւր հովանաւորութիւնն չ'պիտի հեռացնէ նորա վրա-
յէն : Վասն զի այն որ իւր հաւատքին զօրութեամբ կրցաւ
համբերել այդ վշտերուն դէմ , նա բան մը չ'կորսնցնէր բնաւ
առաջի Աստուծոյ : Որ իւր խնամոց և սիրոյն առարկայ ըրած
է բոլոր հաւատացեալներն :

Կեանքն բազմաթիւ կերպարանափոխութիւններ կ'պարու-
նակէ իւր մէջ , որք մերթ ուրախ կ'ընեն զմարդ և մերթ-
ադարում , մերթ երջանիկ և մերթ ապերջանիկ , մերթ առողջ
և մերթ հիւանդ , մերթ հարուստ և մերթ աղքատ , մերթ
զօրաւոր և մերթ տկար , և կեանքի այդ բոլոր պատկերնե-
րուն մէջ , մարդ կարող է իւր գիրքն անփոփոխ պահել հան-
դէպ իւր Արարչին , և իւր ամենէն աւելի երջանիկ վայր-
կեանքերէն մինչեւ յետին դժբաղտութեան վայրկեանը միշտ
«Եղիցի անուն Տեառն օրհնեալ» դոհունակ խոստովանութիւնն
հանել իւր բերնէն , իբրեւ մարդ համակերպելով աշխարհի
բնական ընթացքին :

Համբերութեան ոգին հոգեկան անհրաժեշտ պէտք մ'է
մարդուն համար , որով ամենէն տագնապալից ժամերն կրնայ
ոք ամօքել իւր սրտին մէջ , և որով կարող կ'լինի առաջն առ-
նուլ վայրկեանական դժգոհութեան ընդդէմ Աստուծոյ : Եւ նա
որ կ'ուզէ ստանալ այդ ոգին , բաւական է կարդալ միանգամ
Յոբայ Գիրքը , յորում անմեղութեան և համբերութեան անձ-
նաւորութիւնն կ'տառապի , աշխարհ իւր ունայնութեան մէջ
կ'պատկերանայ , և Աստուած իւր հաւատարիմ ծառային հաս-
տատուն հաւատքովն կ'փառաւորուի : Ստուգիւ ոչինչ աւելի
քան այս պարագայն ճշգրտապէս կ'բարացուցէ կեանքն ճշ-
մարիտ հաւատացեալի մը , որ պարտաւոր է գիտնալ թէ ի՞նչ
է իւր ճակատագիրն , ի՞նչ է երկրաւոր կենաց արժէքն , և
ի՞նչ բանի մէջ կ'կայանայ Աստուծոյ փառքն : Վասնզի եթէ

կար բան մը որ զՅոր իւր վիրալից հիւանդութեան մէջ կ'մխի-
թարէր՝ իւր գիտակից անմեղութիւնն էր այն , եթէ կար բան
մը որով նա կ'համբերէր իւր այդ ցաւերուն մէջ , անցաւոր
կեանքի մը գիտակցութիւնն էր այն , և եթէ կար բան մը ո-
րով Աստուծոյ վառքն կ'ցոլար ի Յոր , նորա համբերութիւնն
ու անդրդուելի հաւատքն էր այն , և ահա այդ պատճառաւ
քրիստոնէին կենաց խաւի մէկ հեռաւոր պատկերն կը տես-
նուի նորա կեանքին մէջ , զոր Եկեղեցւոյ նախկին Ս . Հարք
Ճվարանեցան Յիսուսի կեանքին նմանցնել , երկուքին մէջ հա-
ւասարապէս տեսնելով զիշտ և համբերութիւն : — Ինչպէս
հրէին նոյնպէս և քրիստոնէին համար Յոր իւր էութեամբ և
կեանքով ա'յնքան օրինակելի է և հետեւելի , որքան քրիս-
տոնեայ առաքինի անձնաւորութիւն մը , և ա'յնքան նուիրա-
կան է և սուրբ որքան քրիստոնեայ նահատակ մը : Եւ Յորայ
կենաց քրիստոնէական նաւիրականութիւնն իւր հաստատու-
թեան կնիքն կ'գտնէ Յակոբոս Առաքելոյն հետեւեալ խօսքե-
րուն մէջ թէ «զհամբերութիւն Յորայ լուարուք և զկատա-
րումն Տեսուն տեսէք» (Յակ . Ե . 11) . և երբ համբերութեան
վրայ կ'իօտուի , պէտք է յիշել նաեւ Տէրունական սա հան-
րածանօթ պատուէրն , ըստ որում «որ համբերեսցէ իսպառ
նա կեցցէ» Մարկ . ԺԳ . 13) : —

ԱՄԵՐԱՏ. Վ.

ԺԱՄԵՐԳՈՒԹԻՐՆ

Եկեղեցւոյ Պատմութիւնը թէպէտ և բացայայտ
կերպով չաւանդեր թէ Երբ կամ որո՞ւ ձեռքով կազ-
մուած ու կարգուած են ժամերգութեանց այն կանոն-
ներն , որ կ'դասնուին մեր կամ ա'յլ եկեղեցիներու ժամա-
դրոց մէջ , բայց ստույգ է որ այժմեան բոլոր կարգաւո-
րութիւնները հաւասար հնութիւն մը չունին :

Քրիստոնէական եկեղեցին , որպէս բազում ծէսերու մէջ , յայտն եւս հետեւած է ի սկզբան չին Ուխտին և Առաքեալներն իրենց ընթացքով հաւատացեալներուն յանձնարարեցին հրէական սովորութեան համեմատ օրական չորս անգամ աղօթք ընել , ժամը երեքին , վեցին , իննին և արեւը մտած ատեն (Տե՛ս ԳրԾ . Բ . 15 , Ժ . 9 , Գ . 1 և թերեւս ԺԶ . 25) : Եկեղեցւոյ նախկին սիւներուն այս հրամանը անխախտ մնացած է՝ թուի առաջին երեք դարերուն մէջ և միայն Դ . ին վերջերը դրուած Սահմանադրութիւնն առաջին անգամ ժամերգութեանց աւելի մեծ թիւ մը կ'աւանդեն : Ասոր վկայութեան համեմատ քրիստոնեայք պարտին օրը վեց անգամ աղօթք ընել . «առաւօտուն , երրորդ ժամուն , վեցերորդին , իններորդին , երեկոյին և հաւաքսօին» բայց այս թիւն ալ , որպէս յայտ է , անփոփոխ չէ մնացած ո՛չ մեր և ո՛չ այլ եկեղեցեաց մէջ :

Եկեղեցական Հայրերն ամէն ժամանակ ջանացած են եկեղեցւոյ փոքրագոյն ծէսերն անգամ համաձայնեցընել Ս . Գրոց զանազան համարներուն , փոյթ չընելով անոնց տառական կամ փոխաբերական իմաստը : Այս պարագային մէջ ալ նոյն բանը կ'տեսնենք . ժամերգութեանց վերոյիշեալ թիւը քիչ ժամանակէն հատ մ'եւս յաւելում կ'ընդունի , որպէս զի արդարանայ Սաղմոսերգուն խօսքն թէ «եօթն անգամ յաւուր օրհնեցից զքեզ» (ՃԺԸ . 165) թիւ մը սակայն որ գործածուած է աստ ոչ թէ աղօթքի որոշ քանակութիւն մը , այլ , որպէս Ս . Գրոց բազում տեղեր , անորոշ քանակութիւն մը ցուցնելու համար , վասն զի սոյն Սաղմոսն երգուած ժամանակ օրը երեք անգամ աղօթք կ'ընէին Հրեայք . «Յերեկոյս ի վաղորդայն և ի հասարակ առուր» (Սղմ , ԾԴ . 18) :

Գալով մեր ժամագիրքին , ինն կարգաւորութեանց կանոններ կ'պարունակէ նա այժմ , որոցմէ հազիւ թէ մէկ քանիին կազմութեան ժամանակը կարելի է որոշել :

Տարակոյս չկայ որ մեր Եկեղեցին հետեւած է այս պարագային մէջ քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյ սովորութեան , և լուսաւորութենէն մինչեւ գրեթէ կէս դար ետքը չորս կարգաւորութիւններէ աւելի չէ ունեցած , առաքելական դարուն պէս :

Առաջին յաւելումը Մեծն Ներսէսի ժամանակ եղած կ'ընդունի . երբ , ըստ Փառաստօսի «կարգեցան կարգք կաթողիկէ եկեղեցեաց ամենայն վայելչութեամբ և քաղաքան կարգք սրբութեան պաշտամանցն» (Գ. դ.) , թէ եւ յայտնի չէ թէ որո՞նք էին այդ բազմացած պաշտամունքքի կարգերը : Այսու հանդերձ , կարծեմ ճշմարտութենէ շատ հեռու չալտի ըլլանք եթէ Ս. Սահակի և Ս. Մեսրոպի հեղինակութիւնը ժամագիրքին մէջ կարգաւորութիւններէ աւելի անոնց ճոխացման մէջ դնենք , և այդ դարուն մէջ կատարուած ժամերգութեանց թիւը Մեծն Ներսէսի սահմանածը համարենք :

Արդարեւ Ե. դարու պատմագիրներուն քով միայն երեք ժամերգութեանց յիշատակութեան կ'հանդիպինք , Առաւօտեան , Երեկոյեան և Գիշերային կամ Հաւաքասի (Տե՛ս Փարպեցի , Եղիշէ և ըն.) , սակայն կարելի չէ ասկէ հետեւցնել թէ միայն ասոնք կ'կատարուէին այն ատեն , քանի որ ցերեկուան երեք ժամերգութիւնները (երրորդ , վեցերորդ և իններորդ ժամերուն) Եկեղեցւոյ սկիզբէն ի վեր կային , բոլոր քրիստոնեայ աշխարհին մէջ : Կերեւի թէ խաղաղութեան ժամանակ և վանքերու մէջ կ'կատարուէին ասոնք , երբ հաւատացեալները իրենց աղօթքը կատարելու ամէն գիւրութիւն կրնային վայելել :

Ամէն պարագայի մէջ , եթէ նոյն իսկ չընդունինք Եօթն ժամերգութեանց գոյութիւնը Ե. դարում , գէթ վեց ըլլալը անվիճելի է . ուստի և Սահակ-Մեսրոպեան առաջին կազմակերպութիւնն հայ ժամագիրքին այժմեանէն շատ քիչ կանոններ կ'պարունակէր :

Այս թիւը յաջորդ երեք դարերուն մէջ՝ մէկ հասի յաւելում միայն ընդունեցաւ (եթէ ան ալ ե. դարէն դոյութիւնն չունէր) . խաղաղականն է այն , որուն կ'ակնարկէ իմաստասէր Կաթողիկոսը Հակոբէան առէ՛ր կոչելով , որպէս կ'ընէ նաեւ Խոսրով Անձեւացիին իւր Մեհարեան մէջ . «Հանգստեան կոչի աղօթք և խաղաղական ասի» գրելով :

Բայց այս թիւը , որ հասարակ է այլ եկեղեցիներուն կարծես փոքր երեւցած է մեր կրօնասէր և աղօթասէր Հայրերու աչքին , որք մեծ մասամբ վանքերու կլիմային տակ մնած ու դաստիարակուած ըլլալով ամբողջ աշխարհն ալ վանքի մը փոխարկելու անհնչ ու փոյթն ունէին : Այս պատճառաւ է անշուշտ որ մեր եկեղեցւոյն մէջ ժամերգութեանց սաւելի մեծ թիւ մը կ'գտնենք , քան քրիստոնեայ աշխարհի բոլոր այլ եկեղեցիներուն քով :

Անձեւացւոյն վերայիշեալ երկասիրութեան մէջ մեկնաբանուած ժամագիրքը , ժամերգութեանց ութ կանոններ կ'պարունակէ : Այս անգամ Արեւադարի ժամերգութիւնն մ'եւս աւելցուած է : Մեր նախնի Հայրերուն քով այս ժամերգութեան և ոչ իսկ յիշատակութիւնը կ'գտնենք , Արեւադարի Մարտի միայն ունէին անոնք , որով առաւօտեան Մարտի Ապրիլին յաջորդող Մանկաց սաղմոսը կ'հասկնային . սաղմոս մը՝ որուն իմաստը կ'արդարացնէ արդէն այդ անուանումը : Եթէ մեր մատենագրութեան նայինք , սոյն ժամերգութեան կազմութիւնը Ը. դարէն անդին չենք կրնար վերացընել :

Անձեւացիէն երեք դար յետոյ ժամագիրքն իւր վերջին կազմակերպութիւնը ստացաւ , ժամերգութեան մ'ալ յաւելումով : Այս վերջին յաւելումը Ներսէս Լամբրոնացւոյն ձեռամբ եղած է , որպէս ինքն իսկ կ'աւանդէ իւր առ Լեւոն գրած թուղթին մէջ . «Գտաք , կ'ըսէ նա , զի պակասեալ էր ի վանօրէիցս խաղաղական աղօթքն և առ նոսա (առ Լատինս) տեսեալ հաստատեցաք , նախ ժողովիլ յեկեղեցին յաղօթս և ապա ի մահիճս հանգչել » :

Ուրեմն ժամագիրքին թէ՛ կադմութեան և թէ՛ ճոխացման փակումը ժԳ. դարուն մէջ եղած է :

Աւելորդ է ըսել որ այս ինն ժամերգութիւններէն իւրաքանչիւրը կ'կատարուէր իրեն յատկացեալ ժամուն , թէեւ զեղծումն ալ պակաս չէր , ինչպէս կ'տեսնենք Համբրոնացւոյն ժամանակ որ ցերեկուան երէք ժամերգութիւններն ի միասին կատարելու զեղծումը բառնալու աշխատեցաւ , և մանաւանդ այժմ , որ այս ինն ժամերգութիւններն երկու և դուն ուրեք երեք խումբի կ'բաժնուին : Մեր Հայերը օրական ինն անգամ աղօթք կ'ընէին և չէին ձանձրանար և մենք երկու անգամ աղօթք ընելու կ'դանդաղինք : Իննէն երկուքի իջնել . որքա՛ն մեծ տարբերութիւն մեր Հայերուին և մեր աղօթասիրութեան մէջ :

ԶԱՒԷՆ Վ. Տ.

Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ Ք

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

Եկաւ օր մը , ուր կրօնական զգացումը նորէն կեանք ու կորով գտաւ , եւ քրիստոնէական ժեւին տակ , հաւատալիչը նորէն ձեռք առաւ հոգիին տիրապետութիւնը : Քրիստոնէութեան հետ , կրօնական զգացումը ո՛չ միայն կենագործեցաւ , այլ աւելի բարձր եւ նուազ նիւթական արտայայտութիւն մ'առաւ : Մինչ երբեմն մարդիկ իրենց համար Աստուածներ շինած էին մարդկային հոգիէն ու բնութեան մեծ ոյժերէն , հիմա սկսան զԱստուած իմանալ էութեամբ , ճշմարտապէս տարբեր Թէ՛ մարդկային հոգիէն եւ Թէ՛ աշխարհէն : Աստուածայինը բայտնապէս դուրեցաւ տեսանելի բնութենէ դուրս , ու անկէց վեր :

Մինչդեռ երբեմն ամէն մարդ իրեն աստուած մը կ'ընէր , եւ ա'յնքան աստուածներ կային որչան ընտանիքներ եւ քաղաքներ , հիմա Աստուած ըմբռնուեցաւ իբր էութիւն մը միակ' անհուն' տիեզերական' միակ ոգեւորիչն աշխարհներուն' միակ լցուցիչը մարդուն մէջ զանուած պաշտելութեան պէտքին : Փոխան այն կրօնին' որ երբեմն Յունաստանի եւ Իտալիոյ ժողովուրդներուն բով ուրիշ բան չէր բայց եթէ հրահանգներու ամբողջութիւն մը , առանց խելամոռութեան կրկնուած ծէսերու շարք մը , լեզուին հնութեանը պատճառաւ յաճախ անհասկնալի եղած բանածեւերու կարգ մը , դարէ դար փոխանցուող եւ իր նկարագիրը իր հնութենէն միայն առնող աւանդութիւն մը . այս ամենուն փոխան , կրօնքը հրամանակարգ վարդապետութիւններու համայնք մը եւ հաւատօրին մատուցուած մեծ առարկայ մ'եղաւ : Ա'լ արտարին բան մը չէր այն , մո'նրաւոր թէ մարդուն խորհուրդին մէջ զրաւ իր աթոռը : Ա'լ նիւթ չէր այլ ոգի մը եղաւ : Քրիստոնէութիւնը փոխեց պաշտելութեան ընտելիւնն ու ձեւը : Մարդը Աստուծոյ ա'լ կերակուր եւ ըմպելի չ'ուռաւ . աղօթքը դիւթութեան բանածեւ մը չէր այլ եւս . հաւատքի զործ մը ու խոնարհ հայցուած մը եղաւ այն : Հոգին ուրիշ յարաբերութիւն մը շինեց Աստուածութեան հետ . աստուածներու երկկուր Աստուծոյ սիրովը փոխանակուեցաւ :

Քրիստոնէութիւնը դեռ ուրիշ նորութիւններ ալ կ'ըրէր : Ոչ մէկ ընտանիքի առտնին կրօնը չէր այն , ո'չ մէկ քաղաքի եւ ոչ մէկ ցեղի ազգային կրօնը : Ո'չ մէկ դատակարգի ո'չ մէկ համախմբութեան չէր պատկաներ այն : Իր սկզբնաւորութեան օրէն' բովանդակ մարդկութիւնը կ'կանչէր իրեն : Յիսուս կ'ըսէր իր աշակերտներուն . «Դնացէր , աշակերտեցէ՛ք զամենայն հեթանոսս» : Այս սկզբունքն այնքան արտակարգ , այնչափ անսովորալ էր որ առաջին աշակերտներն պահ մը վարանեցան : «Դործք տուարելոց»ին մէջ կ'տեսնուի որ անոնցմէ շատերն ի սկզբան յանդիս չ'առին նոր վարդապետութիւնը ծաւալել այն ժողովուրդէն զուրս ուր ծագում առած էր այն : Այդ աշակերտները հին հրեաներուն պէս կ'իտարհէին թէ Հրեաներուն Աստուածը չէր ուզեր ուրիշներէն պաշտուիլ : Հին ժամանակներու Հռովմայեցւոց եւ Յունաց պէս կ'հաւատային թէ ամէն ցեղ իր աստուածն ունէր , եւ թէ այդ աստուծոյն անունն ու պաշտօնը տարածելը սեփական բարիքէ մը եւ մասնաւոր պաշտպանէ մը զըկուիլ էր , թէ այդպիսի տարածում մը հաւատքի' հակառակ էր միանգամայն պարտականութեան եւ շահու : Բայց Պետրոս խօսեցաւ իր աշակերտներուն թէ , «Աստուած տարբերութիւն չ'ոնէր հեթանոսներուն եւ մեր միջեւ» , սիրելի եղաւ Պօղոսի կրկնել այս մեծ սկզբունքն ամէն տեղ , ամէն տեսակ ձեւով . «Աստուած , կ'ըսէ նա , հեթանոսներուն առջեւ կը բանայ հաւատքին դուռները : Միթէ Աստուած միայն Հրեայներո՞ւն է Աստուած . ո'չ ապաքէն հեթանոսներուն ալ Աստուածն է : Հեթանոսներն ալ Հրեաներուն հետ նոյն ժառանգութեան կանչուած են :»

ՏԻՒՍԹԷԼ ՏԸ ԳՈՒԼԱՆԺ .

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն

Հ Ի Ն Հ Ա Ի Ա Տ Ք Հ Ա Յ Ո Յ .

Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ , ՎԵՌԵՏԻԿ 1895. —

Նախապէս Բագրատի միջոցաւ մաս առ մաս հրատարակուած և հիմա ամբողջ հատորիկ մը ձեւացնող այս գիրքը՝ որ իր կարեւորութեամբը կրնայ հետաքրքրական ըլլալ շատերու՝ հեղինակին լաւ գործերէն մին է : Հնախօս մատենագիրն գուցէ զգալի պակաս մը թողած պիտի ըլլար , եթէ իր անհատնում հետազօտութիւններէն բաժին մ'ալ չհանէր տոհմային հին կրօնքին համար :

Գործին սկիզբը գրուած Յանք միայն աչքէ անցնողն ինքնին կ'տեսնէ թէ ո՛րքան ճոխ պաշարով կ'ներկայանայ հեղինակը : Փափաքելի էր սակայն՝ որ Բագրատի ցանկ մ'ալ ունենայինք գրուածին մէկ կողմը , գոհացում մը գտած ըլլալու համար թէ Հ. Ալիշան բազմատական դիցարանութեան և լեզուարանութեան մասին յառաջ բերած կարծիքներն կամ տեսութիւններն ի՛նչ տեսակ ազբիւրներու վրայ կ'հիմնէ : Այս դիտողութիւնն ընելով՝ չենք ուզեր ըսել թէ հեղինակին բացատրութիւններն առանց ասոր ինքնահնար բան մը կ'մնան և կամ չենք կարծեր բնաւ թէ անձնական հիղինակութեան մը ազդեցութիւնը տկարացուցած չըլլալու համար զգուշութիւն մ'ի գործ դրած ըլլայ . իր գիրքը ծայրէ ծայր ընթերցողը կրնայ վստահ ըլլալ թէ հեղինակը հին կրօնքներու վրայ ալ շատ բան՝ շատ բան կարգացած է , հա-

կառակ անոնց՝ որոնք իրենց հաւած նիւթին վերաբերմամբ երկրորդական կամ երրորդական ձեռքերէ հաւաքած քանի մը տող վկայութեանց համար խոշոր գիրքերու անուններ կ'շարեն մեր առջև իբրև հարեւակաւ ։ Այսու ամենայնիւ՝ Հ. Ալիշան իր արդարացումը կ'դռնէ թերեւ՝ սա յայտարարութեամբը՝ թէ «առանց չատ վեր վար թռչտելու և ի խորս մանելու» պարզապէս ուշ դարձուցած է միայն՝ նիւթական յիշատակարաններու միջոցաւ Հայոց հին կրօնին վրայ աւանդուած ծանօթութիւններու ։

Սակայն՝ բաւական խնամով պատրաստուած այս դործին համար՝ որ իրեն յատուկ նրբութիւններ կ'առհանջէ՝ ի՞նչ ուղղութեան կամ ի՞նչ դատաւորութեան հետեւած է հեղինակը .— Ընդհանուր ուղղութեան մը կամ թէ ըսենք՝ նիւթին իմաստասիրական տէսակէտի մասին միտք յագնեցնելու պէտք մը չէ զդացած բազմահմուտ վանականը . եկեղեցական տեսութեան մը համաձայն՝ կրօնքի բարձրագոյն հաւատալիին կամ Աստուծոյ ճշմարիտ գաղափարին յանկարծ յաջորդած կ'համարի պաշտելութիւնն լեռներու՝ քարերու՝ կրակի՝ ջուրի՝ ծառի եւայլն, որ է Բնապշխման, առանց շօշափել տալու այդ սահեցման գիծին խորհրդաւոր վայելչքը ։ Դիցեա՛նք .— զաստգրքերու պարզ մեթոտն է այս, որուն արժեքին վրայ հարկ չկայ ծանրանալու . միայն թէ՝ դըժուարին կ'թուի մտքին համար ըմբռնել՝ թէ ի՞նչպէս ճշմարիտ Աստուծոյ գաղափարը Բնայինի Բշտանհունէն գլորելով անտաշ քարի մը մէջ կ'ըռնուի . գէթ այդ անկումի շրջանը կատարած ըլլար պաշտող միտքը արեւէն աստղերուն, աստղերէն կայծակին, ու այսպէս աստիճանաբար իջնելով՝ ։ Դիտողութեան մը տեղի կ'ընայ տալ նաև գրքին ներքին դասաւորութիւնը, ըստ որում «հանրեքնիկ Կեանք»ի գլուխը (ԺԲ) ծաղկեալ կուսպաշտութեան մը նուիրուած գլուխէն (Թ) վերջ դրուած է, մինչդեռ անմահութեան վարդապետութիւնը՝ ի՞նչ կերպով ալ որ

իմացուի՝ հասարակ և կանխածին երեւոյթ մ'է ամէն կրօնքներու մէջ։ Մնացեալ նիւթերն ալ ստորիճանաւորութեան որոշ սանդուխ մը չունին, թէպէտեւ կ'ստատուանինք թէ շատ դիւրին չէ կրօնական դադափարներու մէջ՝ մէկէն միւսին անցը տուող սահմանադժերն ամէն կերպով ճշդել։

Գրքին մէջ աւելի բան մ'ալ եթէ չենք սխալիր՝ պակաս թուեցաւ մեզի, Հայոց հին կրօնքին քաղաքական մասն է այն։— Ուրեմն բարոյական չունէ՞ր ընտ այս կրօնքը, պիտի հարցնէ ընթերցողը, յարելով միանգամայն թէ ո՞ր կրօնք իրեն համար բարոյական մը չունի։ Կերեւի թէ այդ դադափարը բոլորովին զլացուած է Հ. Ալիշանի կողմէ՝ Հայոց հին կրօնքին, քանի որ համարձակ էյայտարարէ ինքը (էջ 26)՝ թէ «ցեղից, ախալից, կրից և ազխտութեան և ստեղծած կամ կարծած անտիքներու» խառնուրդ մ'է այն։ Ներուի մեզ բսել թէ անիրաւ է այդ բացարձակ վճիռը, Հ. Ալիշան մարդկային կեանքի հոգեկան փթթումներուն վրայ խանդավառանքով կամ դէթ առդահատանքով մը չէ նայած։ Ուստի և զարմանալի չէ՝ որ այդ ամէնը «աղջախոհ քրիստոնէի մը համար պժղալի» նկատող միտք մը չկարենայ կամ չուզէ տեսնել ինչ ինչ բաներ իր նիւթին վերաբերութեամբ, «վերերն ելնելու կամ խորերն իջնելու» հարկին չծառայելով հանդերձ։

Հին կրօնքի մը պատմութեամբը մեր ուսանելիք դասերէն մին ալ հին քաղաքակրթութեան մը վիճակի արտայայտութիւնը պէտք է ըլլայ, բայց դեռ այդ տեղը չենք հասած. և ո՞վ դիտէ թէ ե՞րբ կարելի պիտի ըլլայ հաւատալիքներու կոտորանքներով կազմակերպել ապրած ամբողջութիւն մը։ Մինչև որ այդ յաջողութիւնը ձեռք բերուի՝ Հ. Ալիշանի Հին ՀԱՌԱՏՔը պիտի մնայ իր տեսակին մէջ ամենէն կատարեալ գործը։

ՔԱՐՈՋԻ ՆԻՒԹԵՐ

ՍՆԱՄԷՁ ՄՏՔԵՐ

«Միթէ եւ մե՞ք կոյրք իցեմք».

ՅՈՎ. Ն. Ք. 40

Ի սկզբանէ անտի մարդկային կրօնական զգացումը դժուարած է զինքն սցցելելու այն վայրերն, յորս կ'հաւատար գլխաւոր սրտի անդորրութիւնն ու հոգիի ծայրագոյն ախփանքը: Բացէք ուխտաւորութեանց էջերն, ու պիտի տեսնէք այն մշտեռանդութիւնը, որով գունդագունդ կը զիմէին մարդիկ սրբութեան համբաւով փայլող ուխտատեղիները: Երուսաղէմ այդ վայրերէն նուիրականն էր Հրեայներուն համար, ուր տարուէ տարի քանի մը անդամներ կ'ելնէին՝ մեծ տօներու առթիւ, և ուր կրօնականին հետ խառն կ'ընթանար քաղաքային հանդիսութիւններու մասը:

Քրիստոս Երուսաղէմի մէջ կը գտնուէր Տաղաւարահարաց տօնին: Ուշագիր զիսոցի մը համար շատ հեշտ չպիտի ըլլայ այն տեսարանը, որ աչքերու կ'ներկայանար այդ տօնավաճառներուն մէջ: Դէմքերու և շարժումներու տարօրինակ խառնուրդ մը, հպարտ ու ցաւած սրտեր, որոնք շատ մօտէն կը զիտէին զիրար, առանց զիրար հասկնալու: Բարձրագոյն դասակարգի ներկայութիւնն անապարար երեւոյթն ունի. հասարակ ժողովուրդը, որ կ'ըզգայ տաճարէն դուրս, կենդանի բնութեան ոգևոր տարրը կ'ներկայացնէ: Հոս դպիր մ'է որ իր վերարկուին ծալքերը հովին կուտայ մասնաւոր խնամքով, հոն օրինականն է, որ օրինաց մագաղաթները կ'զաւարէ իւր ձեռքին մէջ, ետսէր հպարտութեամբ, հոն փարիսեցի մ'է, որ իր գրականակը լայնած կ'չրջի, հոռ ընտանեաց հայրը, կա-

սոյտ երկնքի տակ իր սեմին վրայ նստած, դուրդուրանքի համբոյրներ կ'շռայլէ իր սրդիներուն: Հոս քահանայ մ'է, որ ծխական պաշտօններու կ'իփութայ իր միաքը տօնական զոհերուն և նուէրներուն հաշիւովն զբաղած, հոն հրեայ կիներ, որոնք զիւերուան քունը փարատած դէպ ի ջրհոր կ'վազեն սասիօրը ուսերնին: Սակայն ասոնք չեն միայն մարդկային ընկերութիւնը կազմող անհատները. դեռ շատեր կան: Երուսաղէմի պարիսպներուն տակ ու ճամբայներու անցքին վրայ նստած են կաղեր, կոյրեր, անդամաւորյծներ, համր ու խուլեր, կարծես յօրինելու համար բնութեան մէկ յուզիչ ուրերգութիւնը, որուն տեսիլը բաւական է ի դուր շարժելու զբայուն սրտերը: Հովիւը իր հօտին գլուխը կանգնած դէպ ի արօտ կը դիմէր, երբ նոյն վայրկենին Քրիստոս դուրս կ'ելնէր տաճարէն: Կեանքի այդ տեսարաններն սովորական և աննշան բաներ դարձած են մեզի համար, որ չենք գիտեր երկնից արքայութիւնը տեսնել մանանխոյ հատին կամ ափ մը խմորին մէջ, կամ մանուկներու վրայ՝ երկնային անմեղութեան երկրային ախպարը: Քրիստոս իր աչքերը դարձուց այդ խեղճերուն վրայ, և արդահատանքի ու կարեկցութեան ախօր հառաչանք մը փրթաւ իր սրտէն: Յետոյ աչքերը դարձուց Երուսաղէմի ապստամբներուն վրայ, և փարիսեցիները յիշեց:

* * *

Քարոզութեան խոնջէնքն ու ժողովուրդին տագնապիչ ժխորը բաւական ծանր էին արդէն, ահա փարիսեցիներու կողմէն ալ կծու քննադատութիւն մը, Քրիստոսի առաքելութեան գէմ ուղղուած: Այն ատեն ողբաց Քրիստոս մարդկութեան կուրութիւնը, կոյր կոչելով զամէն անոնք, որոնք իրենց սրտերը կ'փակեն աստուածային նոր յայտնութեան հանդէպ. Փարիսեցիք անձնավստահ ու յուսակնոտ, կ'իփոքուին հարցունեւ անոր թէ մի՞ դուցէ իրենք ալ այդ կոյրերուն դասակարգէն նկատուած ըլլան. — «Միթէ և մե՞ք կոյրք իցեմք». — Այս ծաղրական հարցումին յետագարձ արձագանգն է, որ շարունակ կ'հնչէ մեր ականջին, երբ խնդիրը

քրիստոնէական ճշմարտութեան վրայ դառնայ:— Փարիսեցիներու բարոյական ազդեցութիւնը խիստ աղիտաւոր եղաւ իր ժամանակին և յետագայ դարերուն համար: Պատենէշ մը քաշած էին անոնք Աստուծոյ օրէնքին առջեւ, ու այդ փշտ պատենէշը իրենց աւանդութիւնն էր, դարերու երկարածիդ չարքով մը խճողուած: Անոնց համար փրկութիւնը ծէսերու պահպանութեան մէջ կ'կայանար, և այսպէսով շուկայի տուր և առ մը կ'իլինէր ընդ մէջ Աստուծոյ և հրէին: Փարիսեցիներուն բարոյական օրէնքը չոր ցանկ մ'եղած էր կարկամած պատուիրաններուն, զորս իրարու հետ միացող կենդանի կապը խզուած էր յաւելոյ: Աղօթքն իսկ իրենց բերնին մէջ ցամաք բռնածն մ'էր եղած:

* * *

Փարիսեցիներու այդ կայծկ յարձակումները դեռ կ'շարունակուին Աւետարանին ու կրօնական գիտախնդրութեան դէմ: Այսօր ամէն անոնք, որոնք գիտութեամբ և իմաստասիրութեամբ զարգացած միտք մ'ունենալ կ'իկարծեն, երբ կարգը հաւատքին ու կրօնքին դայ, առանց լուրջ մտածուելի, առանց առողջ դատաստանի ու անկողմնակալ քննադատութեան, կ'ըսեն մեզի. «Միթէ և մե՞ք կոյր իցեմք»: —Այս իսկ է մարդկային իմաստութեան դաւանանքը, երբ մանաւանդ եւս սասկրութեան զգացումով չաղուուած է այն: Ճշմարիտ և ուղիղ համարել գոյն, զոր ինքը կը դաւանի, թէ՛ անտէք ըլլայ այն և թէ՛ նախադաշարում, թէ՛ սխալ դաւանանք մ'ըլլայ և թէ՛ մոլորութիւն, ամէն պարագայի մէջ ա՛յն արժէքն ունի մարդկութեան համար, ինչ արժէք որ ունէր բացարձակ ճշմարտութիւնը Գրիտատի համար: Մարդկութիւնը զիւրաւ չըբեր իր ճշմարտութիւն գաւանած մոլորութիւնները եւ միակ առարկութիւնը որ պատրաստ կայ իր շրթանց վրայ՝ իբրը պատասխան ճշմարտութեան հարցումին, պիտի ըլլայ, թէ «Միթէ և մե՞ք կոյր իցեմք»: Արդարեւ քանիներ կան, որոնք երիտասարդութեան ծաղիկ հասակին մէջ կ'իթողան դպրոցական գրասեղանները, առանց կրօնական դաւանանքի, առանց դրական ու իրական հմտութեան, և սկեպտիկեան հեղձութեամբ մը կրթական խօտիլ նոյն իսկ ամենէն աւելի բարձրա-

գոյն ճշմարտութեանց վրայ: Կ'անարգեն ներքին մարդը, ու խղճի ձայնը կ'խեղդեն անլուր թշնամանքով: Խաբուած ապուշներ կ'նկատեն իրենց նախնիքը, և երբ բարերար ձեռք մը ջանայ անոնց մէջ սրտին ու հոգւոյն ներդաշնակութիւնը վերահաստատել, անոնք նոյնը պիտի ըսեն անոր, ինչ որ փարիսեցիներն ըսին Յիսուսի:

Ինչ որ ալ ըլլայ, սակայն, Քրիստոսի գործն ակներև է, եկեղեցին հաստատ կը մնայ իր ուղիւ վարդապետութիւններով, վիսյութիւնք կ'մնան միշտ: Իրողութիւնք յայտնի են, և յայտնի իրողութիւններն ամէն բանէ վեր կ'դասուին: Բարեմիտ ժողովրդեան լինընաբեր ու անկեղծ գիտակցութիւնը իրողութիւններու և իրականին կ'փարի միշտ, և կ'արհամարհէ այն վարդապետութիւնը, որ իրողութիւնը կ'թխտէ: Այս վայրկեանէն կ'սկսի ունայն գիտութեան, սուտ կրօնին ու սխալ բանականութեան տագնապը: Թեթեւ ու անապարծ մտքերու համար անձնապաշտպանութեան միակ գործիք կ'մնան անէծք ու հայհոյանք: Յանուն իրենց մոլար սկզբան, ճշմարտութեան ու արդարութեան վիճան ամբարիշտ կ'նկատեն, յանուն իրենց անամէջ գիտութեան, իբր տգէտ կ'ամբաստանեն զանի:

Ահա, այսպէս մի կողմանէ կաղը, կոյրը, մուրացիկը, որոնք կ'նգովուին ու կ'ամբաստանուին Քրիստոսի դատին համար, և միւս կողմանէ, փարիսեցին ու դպիրը, որոնք ամէն ինչ կը խեղաթիւրեն, և ճշմարտութեան հանդէպ հեգնող ժպիտ մ'ունին միայն: Այս է այն մշտնջենական հակասութիւնը, որ Քրիստոսի գործին իրական նկարագիրը ցոյց պիտի տայ: Առաջինները պիտի հարցնեն Քրիստոսի. «Միթէ և մեք կոյրք իցեմք», և իրական ձայնի պիտի արժանանան. երկրորդները պիտի կրկնեն նոյն հարցումը, և ի պատասխանի պիտի ըսեն. «Նիթէ կոյր էիք ոչ էր ձեր մեղ. բայց, արդ, ասէք եթէ տեսանեմք, և մեղքն ձեր ի ձեզ հաստատեալ են:

ՄԱՌԻՇԵՐ, Վ. Ս.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն Հայոց Հայրապետը հեռագիր մը ուղղելով Պարսից Մուշաֆֆէրէտօին Շահին շնորհաւորեր է անոր զահակալութիւնը՝ բարեմաղթութիւններ ընելով:

Ն. Վեհափառութիւն ի պատասխանի հեռագիր մը ուղղելով շնորհակալութիւն յայտներ է:

Վսեմ. Տոբթ. Սերվիշէն էֆէնտի և Տոբթ. Տիգրան պէյ Աճէմեան Ազգ. Հիւանդանոց իրենց այցելութեանն առթիւ, յետ մանրակրկիտ քննութեան, ստուգած ըլլալով թէ հիւանդարանի շէնքն իւր նպատակին լաւագոյնս ծառայեցնելու համար պէտք կայ յաւելումական մէկ քանի մանր շինութիւններու և փոփոխութիւններու, Ազն. Միքայէլ էֆէնտի Յակոբեան՝ Վսեմ. Սերվիշէն էֆէնտիի հետ տեսակցութենէ մը ետքը՝ յօժարակամութիւն յայտներ է այս մասին պէտք եղած բոլոր ծախքերն իր անձնականէն վճարելու: Հետեւապէս հիւանդանոցներու շինութեան մասնագէտ ճարտարապետ Պ. Քամբանաքիի յանձնուած է այս դործ, որոյ պարագաներն ճշդելու համար Ազգ. Հիւանդանոցի բժշկապետ Տոբթ. Թիրևաքեան էֆէնտի, նոյն հաստատութեան յիմարանոցի ճիւղին բժիշկ Տոբթ. Մոնճէրի և Պ. Քանաքեան պէտք եղած խորհրդակցութիւնները կատարած են: Կը կարծուի թէ Հիւանդարանի շէնքին սոյն բարեփոխման իբրեւ հինգ—վեց հարիւր ոսկի ծախք պիտի երթայ, բայց շէնքին օգտակարութիւնն անհամեմատ պիտի աւելնայ՝ մասնաւանդ առողջապահական տեսակէտով:

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն անձնապէս տկար և հանգստեան կարօտ ըլլալով, ամսոյ մը չափ իւսկիւտար պիտի փոխադրէ իւր բնակութիւնը:

Ն. Ամենապատուութիւն, որ երկուշաբթիէն ի վեր իր տունը կը գտնուէր, երէկ Պատրիարքարան դալով նախագահեց Խառն Ժողովոյ նիստին:

Ամեն. Ս. Պատրիարք Հօր բացակայութեանը միջոցին եկած ամեն գրութիւններ պիտի քաջուին Դեր. Փոխանօրդին և հայերէնի ու թուրքերէնի ղիւանապետներուն կողմէ, որք Ս. Պատրիարք Հօր անմիջական անօրինութեան ու հրամանին վերաբերեալները պիտի ղրկեն Ն. Ամենապատուութեան:

Վարչական Ժողովներն իրենց նիստերը պիտի ընեն:

Դատական և կրօնական դործոց նախարարութիւնը Ամեն. Ս. Պատրիարք Հօր ղրկեց այն հրամանագիրներն, որք կը վերաբերին՝ Պայազիտի տաճարական Տեղապահ Ազիւսմարայ վանուց միաբան Տ. Մամբրէ վարդապետի, Գէօթահեաի առաջնորդական տեղապահ Տ. Մկրտիչ վարդապետի, որ իզմիտ կը գտնուի, ինչպէս նաև Թոքատի առաջ. տեղապահ Հուրիկեան Տ. Յովհաննէս վարդապետի և Ամասիա-Մարզուանի առաջ. Տեղապահ Երուսաղեմայ միաբան Ֆրանկիւկեան Տ. Նիկողոս վարդապետի պաշտօններուն:

Տպարանի նոր վարչութիւնն ստանձնելով Մայր Աթոռի տպարանի ղեկավարութիւնը՝ հազիւ կարողացաւ ցարդ տպարանիս գոյից ցուցակ կազմել և ուսումնասիրել տպարանի վիճակը: Այս վիճակի ուսումնասիրութիւնն արդէն իսկ ղեկուցուած է Նորին Ս. Օթութեան որ մտադիր է հոգալ տպարանի թերութիւններն և նախապատրաստութիւն տեսնել Ս. Գրքի տպագրութեան

համար , որի հրատարակման նախահաշիւը մերձաւորապէս 30,000 ռուբլու է հասնում :

Տպարանիւ ձուլարանի մեքենաներն հնացած լինելով՝ մտադրութիւն կայ նոր մեքենաներ բերելու , որպէս զի հնար լինի տպարանիւ բաղմնաթիւ մայրերից նոր տառեր ձուլելու : Առ այժմ նոր տառեր են ձուլուում առաջիկայ տարուան Օրացուլի տպագրութեան համար :

Ս. Հայրապետի հաճութեամբ տպարանիւ աշխարհական կառավարիչ Պ. Մ. Փափաղեանն արձակուեցաւ , որին փոխարինեց շնորհունակ Ղուկաս սարկաւազը :

(Արարաբ)

Արարաբի վերջին թիւէն կը քաղենք հետեւեալ առաջնորդական և վանահայրական փոփոխութեանց որոշումները .

Դեր. Յովհաննէս եպիսկոպոս Տաթեւացի հայրապետական հրամանով Ս. Էջմիածնից գնաց Սեւանայ վանքը :

—Արժ. Յովհաննէս վարդապետ Աշտարակեցին կարգուելով Մողնոյ Ս. Գէորգ վանքի վանահայր եւ գործակալ Ապարանու , տեղափոխուեց իւր պաշտօնավայրը :

—Արժ. Թովմա վարդապետը Օշականից տեղափոխուեցաւ Ս. Էջմիածին :

—Բլուր գիւղի այրի Տէր Սիոն քահանան վեղար ընդունելով՝ դարձաւ միաբան Ս. Էջմիածնի :

—Հառիճոյ նոր վանահայր Արժ. Հմայեակ վարդապետը աչքերի տկարութեան պատճառով հեռացել է իւր պաշտօնավայրից եւ գնացել է Թիֆլիզ բժշկուելու :

—Ագուլեաց Թովմայ առաքելոյ վանքի վանահայր Դեր. Գրիգոր եպիսկոպոս Աղսիիւրեանը ժամանեց Մայր Աթոռս :

—Արժ. Գրիգորիս վարդապետ Տէր Ստեփաննոսեան հայրապետական հրամանով Թողեց Ս. Գայանէի վանահայրութեան պաշտօնը :

—Ապրիլի 6 ին , շաբաթ օրը , սրբազան Սուրբիաս Արքեպիսկոպոսը քահանայ ձեռնադրեց Ս. Գայեանէի վանքում շնորհունակ Թորոս Զուղայեցի եւ Երեմիա Ապրիլեան ոարկաւազներին :

—Երեւանի Թեմի փոխանորդ Դեր. Անանիա եպիսկոպոսը հրաժարական է տուել իւր պաշտօնից :

—Բարեշնորհ Կիւրեղ վարդապետ Տէր Պետրոսեանը նշանակուած է հին Նախիջեւանի յաջորդ , իսկ Նոր-Բայազետում գործակալ կարգուած է նորընծայ Սիոն Արեղան :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԻՏԱԼԻԱ. — Ումպերթօ թագաւորը հրամանագիր մը ստորագրեց, որով Հապէշտատանի պատերազմը վերջացած և զինուորական գործողութիւնները դադարած հռչակուեցան:

— Պարաթիէրի զօրավարն անպարտ տրձակուեցաւ: Կըսուի թէ որոշեր է վանք մը մտնել և իւր կենաց մնացեալ մասը կրօնաւորութեամբ անցնել:

— Հռոմայ Պապն ըսեր է թէ Պ. Կըստոպընի նամակն՝ անկլիքան ձեռնագրութիւնները՝ վաւերական կամ առաքելական ճանչելու պէտքին և բանաւորութեանը վրայ՝ յոյժ կարեւոր գրուած մ'է, բայց խնդիրն աւելի կը դժուարացնէ: Լեւոն ԺԳ. ձեռնհաս կարգիւնալիներու յանձներ է՝ պատասխան մը դրել անոր:

Անգլիացի կաթողիկե եպիսկոպոսները իրենք զրէթէ միաձայնութեամբ հակառակ են անկլիքան ձեռնագրութիւնները վաւերական ճանչնալու: Իրենք որ անկլիքանութենէ դարձած են աւելի խիստ են այս մասին:

— Զիվիթա վէքիա այցելող անգլիական նաւատորմին հրամանատարը՝ Գըլմ-Սէյմուր ծովակալն իր սպայից հետ Հռոմ գնաց և ընդունուեցաւ Ումպերթօ թագաւորին կողմէ:

ՖՐԱՆՍԱ. — Ժիւլ Սիմօնի յուղարկաւորութիւնը չքեղ հանդէսով կատարուեցաւ տէրութեան ծախքով: Նախարարապետ Պ. Մէլին բանախօսութիւն մը արտասանեց:

ՍՊԱՆԻՈՅ կառավարութիւնը պաշտօնապէս հերքեց

այն զրոյցը թէ Հաշտութիւն կնքուեր է ընդ մէջ Քուս-
պացոյց և Զօր. Վէյլէրի:

ՊՈԼԿԱՐԻՈՅ Ֆերտինանտ իշխանը Ռուսիոյ կայսեր
ներկայանալով Ն. Վեհափառութեան մատոյց՝ Պուլկա-
րիոյ զանազան տեսարանները ներկայացնող դեղեցիկ և
ծանրագին ալպօմ մը, որ յատկապէս պատրաստուած էր:

ՉԻՆԱՍՏԱՆ.—Հաստատուեցաւ այն լուր թէ Բէքինի
կառավարութիւնն՝ իւր երկիրներուն մէջ շինութիւնն ո-
րոշուած բոլոր նոր երկաթուղիներուն համար պէտք ե-
ղած արտօնութիւնները տուած է Ռուսերուն: Ռուսաց
այս յաջողութիւնն, ինչպէս Թէհրանի մէջ ալ ձեռքբեր-
ուած էր, քաղաքական տեսակէտով ալ հարուած մը կը
նկատուի բրիտանական ազդեցութեան:

—Լի-Հունկ-Չանկ փոխարքան, որ Մոսկուա կը
գտնուէր և ներկայ գտնուած էր Չարին թագադրու-
թեան, Պեկին գնաց և ներկայացաւ Վիկտօր կայսեր:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ. — Մուհամմէտ Ալի Միրզա, անդ-
րանիկ որդի Մուզաֆֆէրէտին Շահին, Պարսկաստա-
նի գահաժառանգ հռչակեցաւ ըստ օրինի:

ՕՍՄ. ՊԱՆՔԱՆ իր բաժանորդներուն հարիւրին հինգ-
շահաքաժին պիտի տայ՝ 1894 Պեկտեմբեր 31ին աւար-
տող աւարուան համար, մինչ նախորդ տարին հարիւրին
ութ տուած էր:

ԹՐԱՆՍՎԱՍԱԼԻ ՈՍԿԵՀԱՆՔԵՐԸ. — Մայիս ամսուն
մէջ Վիգլադերտրանտի հանքերէն 160,635 ունկի ոսկի
արտադրեցաւ, որոյ վրայ աւելցնելով հանքաց ոսկատ
ընկերակցութեան արտադրած 34,372 ունկի ոսկին, գու-
մարը կը հասնի 195,007 ունկի, մինչ ապրիլի արտադ-
րութիւնն էր 171,109 ունկի:

Թարգմանութիւնք Կ. Ս. Իւթիւնեանի

ԶԵՂԶԵԱԼ ԳԻՆԵՐ

	Հաւսնք	Ղրուե
Թափառական Հրեայ (Էօժէն Սիւ)	4	50
Ընտանեզուրկ (Էքթօր Մալոյ)	2	12
Կարմիր Մարդոց Երդումը (Բօնսօն տիւ Թէրայլ)	2	10
Կրանթ Նաւապետին որդիքը (Ժիւլ Վէրն)	3	15
Հինգ շաքամ օդապարիկով »	2	12
Ամուսնութիւնք Փարիզի (Էտմոն Սպրու)	1	5
Զիկազակ (Ֆօրթիւնէ տը Պուակօպէ)	1	5
Տըկիին Վիլֆրէրոն որդի (Լէոն տը Թէնսոյ)	1	5
Սկզբունք քաղաքական անտեսութեան (ժօ- գէֆ Կառնիէ)	1.	3
Պատժ. Օրինագիրք Օսմ. Պետութեան	1	2
Սրկաճք Միւնխիաւզէն Պարոնի	1	2

Կեդրոնատեղին է ՊԱՂՏԱՏԼԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ ԳԻՆԵՐ
Թան Համամ Թիւ 14:

ԱՐՏՕՆԱՏԵՐ

Կ. Ս. ԻԻԹԻԻԶԵԱՆ